ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ամենապատիվ Սրբազան եղբարք, սիրեցյալ սրբազան եղբայրակիցներ, մեկ րոպե իմ խոսքը ձեզի ուղղելե առաջ, թույլ տվեք ինձ, որ դառնամ դեպի այն սրբատեղին, ուր Աստված իջավ Իր Միածին Որդվույն մեջեն և օրհնեց մեր հայրենիքը, մեր հողը: Թույլ տվեք ինձի առաջին պարտքս համարել Իջման Սուրբ Սեղանին համբույրս որպես ուխտի նվիրականագույն պահը այս կյանքիս: (Համբուրեց Իջման սեղանը և դառնալով ժողովականներին՝ շարունակեց իր խոսքը):

«Տուր զօրութիւն ծառայի Քո, կեցոյ զորդի աղախնոյ Քո եւ արա առ իս նշան բարութեան»: Սաղմոսերգուին այս բառերով ես կբանամ իմ շրջելները երբ առաջին անգամ ըլլալով Իր կամքովը և Իր ժողովրդին ընտրությամբը կկոչվիմ այս բարձրագույն և ծանրագույն պարտավորության: **«Տուր զօրութիւն ծառայի Քո»:** Գիտեմ, ես ինքզինքս լավ կճանչնամ: Տկար եմ ես այս մեծ, «անբերելի ծանրության» համար, ինչպես կըսե Նարեկացին, բայց «Տուր զօրութիւն ծառայի Քո և արա առ իս նշան բարութեան»:

Եվ, սիրեցյալ եղբայրներ հոգևոր, գործակիցներ աշխարհական, տիկիններ և օրիորդներ, ես առաջին հերթին մարդկային բառերով անտարազելի և անհուն շնորհակալություն կհայտնեմ ձեզ բոլորիդ, որ երկար խորհրդակցություններե, թերևս երբեմն հոգեկան ներքին մղձավանջներե ետքը, եկաք այս եզրակացության և զիս բերիք որպես նոր գահակալ Լուսավորչահիմն Մայր Աթոռոն:

Սրբազան եղբայր՝ Կաթողիկոսական Տեղապահ Մայր Աթոռոն: Ես քաջ գիտեմ, թե դուք անցնող յոթ ամիսներու ընթացքին ինչքան քաջությամբ, տոկունությամբ և լայնախոհ համբերությամբ տարիք այս ծանր բեռը, որպեսզի 130-րդ և 131-րդ Կաթողիկոսներուն կապը ըլլաք դուք: Այսօր եղբայրական ամենայն քաղցր սիրով իմ շնորհակալությունները կհայտնեմ Ձեզ և ի խորոց սրտի կմաղթեմ, որ Երուսաղեմի Առաքելական Սուրբ Աթոռը ծաղկի Ձեր գահակալության երկար տարիներուն և դառնա մեր Եկեղեցվո հոգեկան սնուցման և զորացման կարևորագույն աղբյուրներեն մեկը:

Հոգևոր եղբայրներ Գերագույն Հոգևոր Խորհուրդի՝ ատենապետությամբ մեր սիրելի Գարեգին Պատրիարքին Կ. Պոլսո և մասնակցությամբ եպիսկոպոսաց և աշխարհականաց դասուն, ձեզ ևս կհայտնեմ իմ խորին շնորհակալությունը:

Շնորհակալության և գնահատանքի ջերմագին խոսքերս կուղղեմ Երևանի Հայրապետական Առաջնորդության Կաթողիկոսական Փոխանորդ և իմ սիրեցյալ կրտսեր եղբոր, անվանակից եղբոր՝ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին կուզեմ, որ ինչպես միշտ զգացած է ասկե առաջ, անգամ մը ևս զգա, որ մեծ եղբայր մը ունի այստեղ, և իր մեջ կտեսնեմ ամենամոտիկ գործակիցներեն մեկը առաջիկա տարիներու ընթացքին:

Ես այս առիթով կուզեմ նաև շնորհակալությունս հայտնել բոլոր անոնց, որոնք հատուկ աշխատանք տարին և որոնց մասին ես վաղը իմ խոսքս կուղղեմ հարգարժան և պատկառելի Ազգային-Եկեղեցական Համագումարին: Ասով չվերջացավ ձեր գործը:

Չեմ կրնար այստեղ իմ սրտագին շնորհակալության, մաղթանքի, գնահատանքի խոսքը չուղղել մեր նորանկախացյալ Հայաստանի Հանրապետության, անոր վսեմաշուք նախագահին, բոլոր պետական ավագանիին, բոլոր սպասավորներուն պետական և բոլոր մեր ժողովուրդի զավակներուն հայրենի և արտասահմանյան:

Եվ վերջապես, երբ այժմ այս ծանր լուծին տակ կմտնեմ, իմ սիրո խոսքը ուղղեմ նաև այն Կաթողիկոսության, որուն 18 տարիներ ծառայեցի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահին վրա: Իմ մաղթանքս է և ջանքս է, որ միշտ այդ միասնականության և գործակցության, մեկ Եկեղեցիի գաղափարին տակ և դրոշին՝ խաչին ներքև հառաջ երթալու կամքը ներկայացվի և շարունակե:

Եվ այժմ կուզեմ որ բոլորդ ալ լսեք որպես Ազգային-Եկեղեցական Ժողովի պատասխանատու անդամներ, պատգամավորներ՝ եկեղեցական թե աշխարհական, իմ առաջին «Պահպանիչը» մեր հայրերու դարավոր ապրումներով օծուն այն աղոթքը, զոր ամեն հավատացյալի համար կըսենք.

«Եւ վասն Սուրբ Խաչի Քո պատուականի, Տէր, ընկալ զաղաչանս մեր եւ կեցոյ զմեզ»:

«Սուրբ խաչիս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, Ամենակալ Տէր Աստուած մեր կեցոյ եւ ողորմեայ»:

«Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ զազգս հայոց, զԵկեղեցիս Հայաստանեայց, զհայրենիքս մեր զՀայաստան աշխարհն եւ զամենայն հայ զաւակունս Քո ցրուեալս ի վերայ երկրի ի ծագս աշխարհի. Տէր, անսասան պահեա՛ զնուիրապետական Աթոռս մեր, զՄայր Աթոռն Սուրբ Էջմիածնի, զՄիաբանութիւն սորին եւ զամենայն կազմակերպութիւնս եւ զհաստատութիւնս Մայր Աթոռոյս. օրհնեա՛, Տէր, եւ զԿաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, զՊատրիարքութիւնն Երուսաղէմի եւ զՊատրիարքութիւնն Կոստանդնուպոլսոյ եւ զամենայն թեմս Հայաստանեայցս Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ: Տո՛ւր խաղաղութիւն, շնորհեա՛ անդորրութիւն եւ բարգաւաճում հայրենեաց մերոց, վասն փառացդ քոց ընդ հովանեաւ Սուրբ եւ պատուական Խաչիդ Քո ի խաղաղութեան. փրկեա՛, Տէր, յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն»: